յորովայնէ մօր մերոյ, թէպէտ յառաջ քան զծնանիլն անծանօթ 'ի մէնջ, այլ 'ի շարժմանէ նորայ ընդ յորովայնի մօր ցուցանի ինքնակալութիւն նորայ, որ շարժէ որպէս և յերբ որ յինքն կամի, և յետ ծննդեան վկայէ մանկութիւն նորայ վասն հաստատելոյ ինքնակալութիւն, զի խաղայ և շարժի, տխրի և ուրախ լինի ըստ կամաց և յաճոյից իւրոյ զամենայն զոր յինքն կամի, թէպէտ անծանօթութիւն նորայ 'ի վերայ ամենայն իրաց 'ի յերեսս երկրի դեռ ևս խաբի 'ի ծնօղէ և դայեակէ իւրմէ, այլ ոչ ամենայն ժամ, այլ ամենայն ժամանակս մանկութեան կենաց իւրոց հաստատուն կայ 'ի վերայ մտաց իւրոց, զի զամենայն զոր ինչ որ ինքն առնէ ոչ այլ ոք կարէ առնել, նոյն գունակ զամենայն զոր ինչ 'ի օտարաց արարեալ, որ յառաջագոյն իւրմէ անծանօթ, թէպէտ արարն իցէ ախորժ նմայ, այլ միշտ յարուցանէ նախանձ իւր՝ թէ զի արդ ինքն ոչ արար լաւագոյն քան զայն, և բազմիցս անգամ նախանձս այս եղև պատճառ բազում գործի եթէ բարոյ և եթէ չարի, որպէս երկաթագործք ամենայն իրաց Օրաւուր գործեցին լաւագոյն քան թէ յառաջին, վկայութիւն բանիս իցէ միայնակ ընթեռնուլն ընթերցողիդ, որ կարես համեմատիլ ասացուածն իմ ընդ միտս և կամս և բնութիւնս քոյ, զի ոչ երբէք երկբայիմ ես զի գտցիս համեմատ ընդ բնութեան քոյ զամենայն զոր ինչ 'ի վեր յիշե-